Դէպքերն այս կացութեան մէջն էին, երբ Յակոբ Զուղայեցի կաթողիկոս կը մատադրէ անձամբ Կ. Պոլիս երթալ։ Ան իր հետ կ'առնէ Փիլիպպոս կաթողիկոսին հաստատման սուլթանական հրովարտակը։ Այս առթիւ, «ժողովեցան, կ'ըսէ Զաքարիա, ամենայն առաջնորդք վանօրէից, եպիսկոպոսք և վարդապետք և հարք և անապատականք, և աշխարհական արք երեւելիք, և մեծաւ փառօք ուղարկեցին զկաթուղիկոսն ի Կ. Պոլիս» (14)։

Յակոբ կաթողիկոս Ամասիայէն մեղադրանաց գիր մը կ'ուղղէ Եղիազարին և ապա կ'երթայ Զմիւռնիա (15)։ Մաղաքիա Արքեպ. Օրմանեան, իր Ազգապատումին մէջ, պատմելով Յակոբ Զուղայեցիի Զմիւռնիա ժամանումը, կը գրէ ընդդէմ Աղեքսանդր Վ. Պալճեանի. «Յակոբի նպատակը յայտնի ըլլալուն, դժուար է հաւատ ընծայել՝ կամեր երթալ ի Հռոմ, բայց արգելանի երթալ՝ ըսողներուն (16)։ Բայց Օրմանեան կը չփոթէ անձերը։ Պալճեան՝ որ կը մէջբերէ այդ շրջանի ժամանակակից Ստեփան Վ. Լեհացիի խօսքերը, Եղիազար կաթողիկոսի մասին կը գրէ՝ թէ «ի վախճանիլն Յակոբայ կաթողիկոսի, նստի յա-

(14) Զաքարիա, անդ, հաս. բ. էջ 73։

(15) Ազգապ. բ. 2562—2563։ Դիւան Ս. Յակոբայ. Սիոն, Նոր Շրջան, Ը Տարի, 1934, Ապրիլ, թիւ 4, էջ 124—125։

(16) Անդ, 2563։